

ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԲԵՄ. ԼՈՒՐԵՐ

Սեպտեմբերի 6-ին, կիրակի.—Բարեկենդան Ս. Խաչի պահոց:

Այսօր Մայր տաճարում, Ավագ ս. սեղանի վրա, օրվա մեծ տոնի առթիվ, ս. պատարագ մատուցեց ուխտավորաբար Մայր Աթոռում գտնվող Սան Պաուլոյի (Բրազիլիա) հայոց հոգևոր հովիվ Տ. Եզնիկ քհն. Կյուրեղյանը և «Հայր մեր»-ից առաջ հավուր պատշաճի քարոզ խոսեց:

Ս. պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

Ս. պատարագին ներկա էին նաև մի խումբ ամերիկահայ ուխտավորներ:

*

Սեպտեմբերի 9-ին, չորեքշաբթի.—Այսօր հոգևոր ճեմարանի հանդիսությունների դահլիճում տեղի ունեցավ Մայր Աթոռի դիվանապետ գերաշնորհ Տ. Ներսես արքեպս. Պոզապալյանի հանդիպումը ուսանողության հետ: Սրբազան հայրը դասախոսություն կարդաց՝ «Մայր Աթոռի հարաբերությունները Կիլիկիո կաթողիկոսության հետ» թեմայով:

Դասախոսության ավարտին սրբազան հայրը պատասխանեց ուսանողների տված հարցերին:

*
* *

Սեպտեմբերի 11-ին, ուրբաթ.—Այսօր հոգևոր ճեմարանի հանդիսությունների դահլիճում Տ. Ներսես քհն. Ներսեսյանը հոգևոր ճեմարանի ուսանողությանը ներկայացրեց «Պետրոս առաքյալի ճառերը Գործք առաքելոցում» հետաքրքրաշարժ ուսումնասիրությունը:

*
* *

Սեպտեմբերի 18-ին, կիրակի.—Խաչվերաց:

Այսօր Մայր տաճարում, Ավագ ս. սեղանի վրա, ս. պատարագ մատուցեց ուխտավորաբար Մայր Աթոռում գտնվող Կենտրոնական Եվրոպայի հայրապետական պատվիրակ գերաշնորհ Տ. Մեսրոպ եպս. Գրիգորյանը: «Հայր մեր»-ից առաջ, օրվա մեծ տոնի առթիվ, բովանդակալից քարոզ խոսեց գերաշնորհ Տ. Տիրան արքեպս. Ներսոյանը:

Ս. պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

Ս. պատարագին ներկա էր նաև ուխտավորաբար Մայր Աթոռում գտնվող Թուր-

ՍՓՅՈՒՌՔԱՀԱՅ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ԽՈՒՄԲ
(31 օգոստոսի 1987 թ.)

քիայի հայոց Ամենապատիվ Պատրիարք Տ. Շնորհք արքեպս. Գալուստյանը:

*
* *

Սեպտեմբերի 14-ին, երկուշաբթի.—Յիշատակ մեռելոց:

Այսօր Մայր տաճարում, Ավագ ս. սեղանի վրա, ս. պատարագ մատուցեց Տ. Խաչատուր քհն. Ֆրանկյանը:

*
* *

Սեպտեմբերի 15, 16, 17 և 22 օրերին հոգևոր ճեմարանի հանդիսությունների դահլիճում Ամերիկայի Միացյալ Նահանգների արևելյան թեմի առաջնորդական փոխանորդ Տ. Խաժակ վրդ. Պարսամյանը ճեմարանի ուսանողությանը ներկայացրեց «Ծեսը եկեղեցու կյանքում» դասախոսությունների շարքը:

*
* *

Սեպտեմբերի 16-ին, չորեքշաբթի.—Այսօր հոգևոր ճեմարանի հանդիսությունների դահլիճում տեղի ունեցավ ուսանողության հանդիպում Թուրքիայի հայոց Ամենապատիվ Պատրիարք Տ. Շնորհք արքեպս. Գալուստյանի հետ: Ամենապատիվ Պատրիարք Հայրը հետաքրքրաշարժ դասախոսություն կարդաց Հին Կտակարանի՝ Մովսես մարգարեին վերագրվող գրքերի մասին:

*
* *

Նույն օրը Վեհարանում, Վեհափառ Հայրապետի նախագահությամբ, տեղի ունեցավ հերթական միաբանական հավաքույթ:

*
* *

Սեպտեմբերի 20-ին, կիրակի.—Բարեկենդան Վարագայ Ս. Խաչի:

Այսօր Մայր տաճարում, Ավագ ս. սեղանի վրա, ս. պատարագ մատուցեց Տ. Խաժակ վրդ. Պարսամյանը և «Հայր մեր»-ից առաջ հավուր պատշաճի քարոզ խոսեց:

*
* *

Սեպտեմբերի 27-ին, կիրակի.—Տօն է Վարագայ Ս. Խաչին:

Այսօր Մայր տաճարում, Ավագ ս. սեղանի վրա, ս. պատարագ մատուցեց ուխտավորաբար Մայր Աթոռում գտնվող Եգիպտոսի հայոց թեմի առաջնորդ գերաշնորհ Տ. Զավեն արքեպս. Չինչինյանը և «Հայր մեր»-ից առաջ քարոզ խոսեց՝ «Ուխտս դիք և կատարեցէք Տեառն Աստուծոյ մերոյ ամենեքեան, ուր շուրջ էք զնովաւ» (Սղմ. ՀԵ 12) բնաբանով:

Ս. պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

Ս. պատարագին ներկա էին նաև սիրիուքանայ մի խումբ ուխտավորներ:

*
* *

Հոկտեմբերի 4-ին, կիրակի.—Այսօր Մայր տաճարում, Ավագ ս. սեղանի վրա, ս. պատարագ մատուցեց ուխտավորաբար Մայր Աթոռում գտնվող Հունաստանի հայոց թեմի հայրապետական պատվիրակ գերաշնորհ Տ. Ոսկան եպս. Գալփաքյանը և «Հայր մեր»-ից առաջ քարոզ խոսեց՝ «Առաջնորդ եղեն մեզ ուղիղ գնացիք ի շաւիղս արքայութեան երկնից մեծապայծառ ջահիւք հաւատով և սիրով իրեանց, ծագեսցին զլոյս Աստուածգիտութեան ի սիրտս մեր» (Ժամագիրք) բնաբանով:

*
* *

Հոկտեմբերի 10-ին, շաբաթ.—Սրբոց թարգմանչաց վարդապետացն մերոց՝ Մեսրովբայ, Եղիշէի, Մովսիսի Քերթողին, Դաւթի Անյաղթ փիլիսոփային, Գրիգորի Նարեկացւոյն և Ներսիսի Կլայեցւոյն:

Այսօր Օշականի Ս. Մեսրոպ Մաշտոց եկեղեցում, օրվա մեծ տոնի առթիվ, ս. պատարագ մատուցեց Տ. Սեպուհ աբղ. Չուլջյանը և «Հայր մեր»-ից առաջ հավուր պատշաճի քարոզ խոսեց:

Ս. պատարագին ներկա էին Մայր Աթոռի և Ս. Մեսրոպ Մաշտոց եկեղեցու միաբանությունը և բազմաթիվ ուխտավորներ:

*
* *

Հոկտեմբերի 11-ին, կիրակի.—Այսօր Մայր տաճարում, Ավագ ս. սեղանի վրա, ս. պատարագ մատուցեց Տ. Արամ վրդ. Բոյաջյանը և «Հայր մեր»-ից առաջ քարոզ խոսեց՝ «Վարդապետ բարի, զի՞նչ բարի գործեցից զի ընդունիցիմ զկեանսն յաւիտենականս» (Մատթ. ԺԹ 16) բնաբանով:

*
* *

Հոկտեմբերի 18-ին, կիրակի.—Այսօր Մայր տաճարում, Ավագ ս. սեղանի վրա, ս. պատարագ մատուցեց Տ. Սեպուհ աբղ. Զուլջյանը և «Հայր մեր»-ից առաջ քարոզ խոսեց՝ «Եւ որպէս կամիք թէ արասցեն ձեզ մարդիկ, այնպէս արասջիք եւ դուք նոցա» (Ղուկ. Զ 31) բնաբանով:

*
* *

Հոկտեմբերի 25-ին, կիրակի.—Գիւտ խաչ:

Այսօր Մայր տաճարում, Ավագ ս. սեղանի վրա, ս. պատարագ մատուցեց Տ. Նարեկ քհն. Մատարյանը և «Հայր մեր»-ից առաջ քարոզ խոսեց՝ «Հրաշագեղ և զորեղ փայտ խաչի Քո Քրիստոս գաւազան զօրութեան ի յերկրի երևեալ. եկայք ժողովուրդք երկրպագեսցուք» (Շարական) բնաբանով: